ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2019թ. թիվ 536-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի փետրվարի 21-ի թիվ 62-Ա որոշմամբ հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրերի՝ ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության, ծրագրերի ներկայացման ժամկետների ժամանակացույցը, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ղեկավարի գրությունը՝ ծրագրի ավարտի մասին և ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի փետրվարի 5-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 11.09.2019թ. թիվ 5 որոշումը /կցվում է/՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

Ավարտված համարել Գյուլագարակի համայնքապետարանի կողմից իրականացված «Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 11
ք.Վանաձոր